բակայս առնողն է լինում գլխաւոր այն ազդեցութիւնը չերմախառից բռնածներին, որոնք արդէն խիկ երեւումէ իւրեանց ծնունդից լինելը նոյն անբարեկարգութեան մէջ Թողնուլ ուսումնարանը. յուսով ենք որ Հոգաբարձութիւնը այնպիսեաց իբրեւ պիտանի պատրաստուած խորհուրդները առանց քննութեան ընդունելու չէ, այլ իւրաքանչիւրին իւր պաշտօնի գործունէութեան համաձայն կպատուէ եւ կպահէ, որով կատարած կլինի իւր պարտականութիւնը:

Կարապետ Մատինեանց

Մեր անցեալ դեկտեմ. ամսագրոյ միջոցաւ Երեւանայ Թատր. Ընկերութեան ուղղուած աղաչաւորութեան համաձայն՝ նոյն Ընկերութիւնը փութացած է՝ ուր որ արժանն է, ներկայացնել իւր հաշիւը, խնդրելով միանգամայն հրատարակել զայն Արարատու միջոցաւ: Որ Երեւանայ Գեր. փոխ.-Թեմակալին գրութեամբ հանդերձ կը հրատարակենք ահաւասիկ:

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Համաձայն բողոքական յօդուածոյ Արարատ ամսագրոյ՝ թիւ Ը. Դեկտեմ. 1869 ամի, յորես 136ի պահանջելով յառաջին կարգի Թատրոնական ընկերութենէ զհաշիւ յընթացս անցեալ 1869 ամի Թատրոնական մուից եւ ծախուց, ստացայ 'ի 20 յունվարի այսր ամսոյ. յորմէ երեւի, զի յանձնեալ Օրիորդաց Դպրոցին 34 րուբլի դրամոյն՝ մուտք եւ ծախք 8ն անգամ յընթացս տարւոյն ներկայացուցմանց՝ են հաւասար 810 րուբլի. զորոց զհամառօտ ցուցակն, նա եւ զցուցակն պատրաստեալ պարագայիցն՝ ընդ այսմ առաքելով Խմբագրութեանդ՝ խնդրեմ 'ի տեղեկութիւն ամենայն ցանկացողաց տպագրութեամբ հրատարակել միջոցաւ Արարատ պատուական ամսագրոյն: Կարեւոր համարիմ յարակցել թէ՝ վասն այսուհետեւ տեղի չտալոյ ումեք բամբասել զկառավարիչն եւ զընկերս Թատրոնական Կառավարութեանն, եւ առանց խնամելոյ զստոյգ տեղեկութիւնս հաշուոց չերողքել զնոցանէ, եւ մանաւանդ վասն պարզապէս ցուցանելոյ զօգուտն երկսեռ Դպրոցաց Հայոց Երեւանայ, որ 'ի Թատրոնական Կառավարութենէ, հրաւիրեցի զայն ընկերութիւն պայմանաւ վարելոյ այսուհետեւ ընդ մեզ, որ զՏեսչութեան ունիմ բարեպաշտօն Թեմական Դպրոցին: Ուստի եւ նորա մատուցին զեօթն յօդուածովք պայմանս՝ Յայտարարութեամբ իւրեանց՝ առ 'ի հրատարակութեամբ յայտնելոյ ամենեցուն թէ՝ յայսմ հետէ Թատրոնական Կառավարութիւնն՝ ըստ այնմ ունի յառաջ տանել զիւրն գործողութիւն 'ի Թատրոնական ներկայացուցմունս. զորպիսի յայտարարութիւն ընդ այսմ առաքելով 'ի Խմբագրութիւնդ Արարատ ամսագրոյ՝ խնդրեմ տպագրութեամբ հրատարակել 'ի լուր ամենեցուն, որպէս զի՝ ցանկացողք օգտի Դպրոցաց՝ ծանիցեն թէ՝ առ իւրաքանչիւր նուազն ողբերգութեան Դպրոցքն ունին ստանալ բացայայտ եղանակաւ միայն 30 ռուբլի դրամ, եւ թէ՝ ցանկացողք ներկայացուցանելոյ զորպիսի եւ իցէ գեր Թատրոնական՝ ունին ըստ Դ.րդ յօդուածոյ այնը պայմանագրութեանն վարել, որով ունի ամենայն գործ Թատրոնական խաղաղութեամբ եւ յաջողութեամբ վերջանալ:

Փոխանորդ Թեմակալին Երեւանայ.
ՄԵՍՐՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ

'ի 25 Յունվարի 1870 ամի.
Երեւան:

Նորին Գերապատուութեան
Տ. Փոխանորդի Թեմակալի Երեւանայ Մեսրովբ Վարդապետի Սմբատեանց

Յառաջին կարգի Թատրոնական
Ընկերութենէ Երեւանայ

Յայտարարութիւն

Յընթացս անցեալ 1869 ամի առաջին կարգի Թատրոնական Ընկերութիւնս ութն անգամ ներկայացումն տալով յօգուտ երկսեռ Դպրոցաց Հայոց քաղաքիս, ընդ ձեռն Պ. Մկրտչի Հոգաբարձուի Թատրոնին կազմեց ընդ ամէնն ութն հարիւր տասն րուբլի գումար դրամ, որով հետ զհետէ պատրաստուեցան Թատրոնական բոլոր հարկաւոր պարագա-

ները, և իւրաքանչիւր անդամին պատահած կարևոր ծախքերը, առանց որոց անկարելի էր 'ի հարկէ գործ տեսնել, և որպիսի պարագայքը այժմ միումեն սեպհականութիւն Դպրոցաց, բաց 'ի զգեստների մի մասից, որ կ՚պատկանին Պ. Ս. Ա. Արամեկլեանցին՝ ներկայ կառավարչին թատրոնի։

Այժմ ընկերութիւնս սորա հետ միասին ներկայացնելով Ձեր գերապատուութեանը յիշեալ հոգաբարձութիւնից ստացած բոլոր մուից և ծախուց ցուցակը, այսուհետև ոմանց անուղղակի յարձակմունքներին տեղիք չտալու և նոցա անվերահաս և անխոհեմ կերպովլ ըոկ կարծիքական դատմունքները խափանելու համար, ներկայ 1870 թուականից սկսած կ'պարտաւորի իւր թատրոնական խաղարկութիւնքը շարունակել հետևեալ պայմաններով։

Նախ՝) Ամէն մէկ խաղին՝ ընդ ձեռն Գերապատուութեանդ յօգուտ երկսեռ Դպրոցաց՝ հատուցանել 30 րուբ. դրամ։

Երկրորդ՝) Թատրոնի բեմը ամբողջ իւր պարագաներով որ գտնւում է Թեմական Դպրոցի դահլիճում, կմնայ Ձեր Գերապատուութեան իրաւանց ներքոյ։

Երրորդ՝) Ընկերութիւնը պիտի ունենայ իւր կողմից ընտրած միշտ մի գլխաւոր կառավարիչ, որոյ պահպանութեան և գործադրութեան տակ կ՚լինին բոլոր թատրոնական պարագայքը, օրինաւոր ցուցակաւ. և որից միանգամայն կախումն կ'ունենայ ընկերութիւնը ամենայն հաւատարմութեամբ և հնազանդութեամբ թատրոնական յարաբերութեանց մէջ համաձայն ընկերութեանս մէջ ունեցած առանձին կանոնաց։

Չորրորդ՝) Եթէ կ՚լինին ուրիշ ցանկացողներ ներկայացնելու նոյն բեմի վերայ ո՛ր և իցէ դեր, պիտի կանխիկ վճարեն յօգուտ երկսեռ դպրոցայ 30 րուբլին, բաց ի ամբողջապէս իրենց յանձնուած պարագայից հասուցած վնասուց գինն։

Հինգերորդ՝) Ո՛չ ոք իրաւունք չպիտի ունենայ թատրոնական պարագայքը վաճառելու, որոնք այժմ են պտուղք քրտանց ընկերութեանս և պիտի մնան իբրև հաստատուն աղբիւր վերջիշեալ երկսեռ Դպրոցներին. իսկ եթէ՝ յընթացս մի տարուայ այն պարագայքը մնան անգործադրելի և ոչնչանալու լինին, այն ժամանակն յիշեալ Դպրոցաց գլխաւոր Կառավարիչքն խորհրդով և տնօրէնութեամբ՝ ինչպէս որ արժան կ՚տեսնեն և օգտաւէտ, այնպէս կարգադրեն։

Վեցերորդ՝) Յատուկ ընկերութիւնը կ՚բաղկանայ ընդ ամէնն վեց անձինքներէ, այն է՝ հինգ դերասաններէ և մի կառավարչէ, որոնք ազատ են իւրեանց պաշտօնին մէջ, ո՛վ երբ կամենայ կարող է որոշուիլ. բայց յետոյ ո՛չ ձայն ունենալ և ոչ մասնակից օգտին կամ պատասխանատու վնասուն լինիլ։ Մասնաւոր դերեր կ՚տրուին ուրիշներին, նայելով նոցա յարմարութեանը։

Եւ եօթներորդ՝) Ընկերութիւնս իւր այս առաջարկած յօդուածները վաւերական առնելու համար, կ՚խնդրէ Ձեր Գերապատուութենէն բարեհաճել Արարատ ամսագրի թերթերի մէջ տպել տալու 'ի գիտութիւն ընթերցողաց։

Սողոմոն Աբամելիքեանց
Սէրոբ Փիլիպպոսեանց
Ներսէս Սէրոբեանց
Նահապետ Աբրահամեանց
Պաւել Եղիազարեանց
Աղէքսանդր Բոլոնեանց

'ի 20 Յունվարի 1870 ամի
յԵրևան

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ.

(Շարունակութիւն*)

ԻՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ

	ռբ.	կպ.
Մկրտիչ Գրիգորեան Տէր Մկրտչեանց	100	—
Սարրայ և որդի նորա Աղէքսանդր Տէր Մկրտչեանց	50	—
Սարգիս Բէկարեանց	50	—
Մահտեսի Յօհաննէս Տէրջանեանց . .	50	—
Զաքարիա Ներսիսեանց	10	—
Խաչատուր Մարգարեան Փանեանց . .	10	—
Աղէքսանդր Գուրգարեանց	10	—
Մահտեսի Թեվան Հախնազարեանց .	15	—
Գէորգ Ասլանեանց	10	—
Կարապետ Աղամիրզեանց	20	—

---

*) Տես Թիւ Ը. 1869 ամի.